

ԿՐՕՆԱԿԱՆ

«Եւ ասէինցիս զօրհանապազ թէ ո՞ր է Աստուած քո»:

(Սաղմոս ԽԲ:4)

Սաղմոսաց Գիրքէն առնուած այս հարցումը նոյնքան այժմեական է այսօր, ինչպէս երեք հազար տարիներ առաջ, երբ Դաւիթ Արքայի մտերիմները հարց կու տային իրեն, ըսելով. «Ո՞ր է Աստուած քո», «Ո՞ր է Աստուածդ»:

Փոքրիկ գիւղաքաղաքի մը մէջ 12 և 10 տարեկան երկու եղբայրներ կային, որոնք իրենց ծննդեան օրէն ի վեր ծայր աստիճան չար եղած էին, այնքան մը որ, երբ այդ գիւղաքաղաքին մէջ սխալ բան մը, փորձանք մը պատահէր, յանցանքը միշտ անոնց վրայ կը բեռցուէր: Օր մը երբ հրդեհը կը փճացնէ այդ տղոց դպրոցը, ծնողները յուսահատ կ'որոշեն մեծ տղան զրկել իրենց եկեղեցւոյ հովուին, որպէսզի խօսէր անոր: Տղեկը վախվիսելով կը մտնէ եկեղեցականին մօտ, որ երկար ու խիստ նայուածքէ մը ետք կը հարցնէ. «Տղա՛ս, ո՞ր է Աստուած»: Ան չգիտնալով թէ ի՞նչ պիտի պատասխանէր, շփոթած ու լուռ կը նայի անոր: Եկեղեցականը դարձեալ կը կրկնէ իր հարցումը, «Տղա՛ս, ո՞ր է Աստուած». տղեկը դարձեալ կը մնայ անպատասխան: Եկեղեցականը այս անգամ արդէն կատաղած, կը պոռայ. «Ո՞ր է Աստուած»: Որուն վրայ տղեկը սարսափահար ինքզինք դուրս կը նետէ հովուին գրասենեակէն ու շնչահատ տուն հասնելով կը վազէ իր սենեակն ու կը սկսի արագ մը հագուստները հաւաքել, երբ յանկարծ աչքին տակէն կը տեսնէ թէ կրտսեր եղբայրը զարմացած իրեն կը նայէր, դառնալով անոր կ'ըսէ. «Լաւ կ'ըլլայ եթէ դուն ալ սկսիս հագուստներդ հաւաքել ու հետս փախչիլ, որովհետեւ այնպէս կ'երեւի թէ Աստուած կորսուած է և յանցանքը դարձեալ մեր վրայ պիտի նետեն»:

«Եւ ասէինցիս զօրհանապազ թէ ո՞ր է Աստուած քո»: Կեանքի սկիզբէն ի վեր, այս հարցումը միշտ չարչրկած է մարդ արարածին ուղեղը: Քաղաքակրթութեան արշալոյսին հետ իսկ, մարդկութիւնը միշտ իր սիրտին մէջ ունեցած է անհունէն եկող ձայն մը, կամ խօսք մը լսելու այս յամառ տենչը: Հակառակ անոր որ ներկայիս կը գտնուինք հազարադմուկ աշխարհի մը մէջ, սակայն միաժամանակ կ'ապրինք ահագոյն լռութեամբ տիեզերքի մը մէջ ու կը տարուինք մենք մեզի հարց տալու. «Եթէ կայ Աստուած մը, հապա ինչո՞ւ Ան չի խօսիր մեզի որպէսզի ամբողջ մարդկութիւնը լսէ իր ձայնը»: Անշուշտ ոչ միայն պարզ անհաւատներ, այլ նոյնիսկ երբեմն իրաւ հաւատացեալներ ըրած են այս հարցումը:

Կարելի է շատ հեշտութեամբ մի քանի պատճառներ տալ թէ ինչո՞ւ ցանկալի պիտի ըլլար Աստուծոյ համար մեր հետ խօսիլը, որպէսզի կարենայինք զինք լսել: Նախ և առաջ, և ամենակարեւորը՝ մենք այլեւս պիտի վստահ ըլլայինք թէ Աստուած գոյութիւն ունի. քանի որ այն պարզ մտածումը թէ միակ ձայնը զոր կը լսենք միայն մեր ձայնին արձագանքն է՝ ինքնին արդէն սպառնալիքով ու սարսափով կը լեցնէ մեզ, թէ իրապէս մէկը չկայ հոն՝ անհունին մէջ: Ու մենք կը տարուինք մտածելու, «Եթէ միայն կարելի ըլլար լսել իր ձայնը, այն ատեն մեր բոլոր կասկածները պիտի փառատին»:

Երբեմն մենք կ'անցնինք հոգեկան այնպիսի բարդ վիճակներէ, երբ կը կարծենք որ գաղափարը միայն թէ Աստուած հոն է, թէ Աստուած մը կայ, մեզի անսահման հոգեկան գոհունակութիւն կրնայ պատճառել: Սակայն պարզ իրականութիւնը այն է՝ որ Աստուած բարձրաձայն չխօսիր մեզի: Միւս կողմէն ալ պէտք է ընդունիլ, որ խորին խորհուրդ մը կայ այս լռութեան մէջ և թէ երբեմն կեանքի խորհուրդները իրենց մէջ

կը պարունակեն անիմանալի ու անբացատրելի բարեացակամութիւն մը. ու եթէ այսքանը կարող ենք ընդունիլ և ըմբռնել, ուրեմն պէտք է ընդունիլ նաեւ որ Աստուծոյ լռութեան մէջ եւս կայ մեծ բարիք մը:

Օրինակ, վայրկեանի մը համար մտածենք անստուգութեան մասին և կամ ինչ ահռելի բան է ըլլալ ստոյգ: Թէ որքան անտանելի են ինքնավստահ մարդիկ, անոնք՝ որոնք կը խորհին թէ իրենք տէրն ու տիրականն են կացութեան: Մարդկային բոլոր անտանելի յատկութիւնները, նման անգթութեան, ամբարտաւանութեան, անհանդուրժողութեան և կեղծաւորութեան, ծնունդ են ամբողջական կամ բացարձակ ինքնավստահութեան: Մարդկային պատմութեան ամենամութ էջերը գրուած են մարդոց մասին, որոնք այնքան ստոյգ էին թէ վերջին խօսքը կը պատկանէր իրենց. թէ իրենք միայն ունէին բոլոր պատասխանները մարդկային մեր տուայտանքներուն, մեր առօրեայ տաղտուկներուն և մտահոգութիւններուն: Ու այդ անհատները պատրաստ էին դիմելու բացարձակապէս ամէն միջոցի, պարզապէս իրենց տեսակէտներն ու գաղափարները պարտադրելու ուրիշներուն:

Մարդկային հոգին յաճախ պէտք ունի կասկածի գրգիռին, որպէսզի զայն մղէ ստեղծագործ հաւատքի: Պօղոս Առաքեալ կը յստակացնէ պատկերը մեզի համար երբ կ'ըսէ. «Մենք կը փրկուինք յոյսով, սակայն ստոյգ յոյսը ինքնին առդէն յոյս չէ. և հաւատքը՝ որ կ'ապրի միայն աչքերով, հաւատք չէ»: Եթէ մենք ամէն անգամ վերջնական ու ստոյգ պատասխան մը առնէինք մեր հարցումներուն և աղօթքներուն, շուտով պիտի կորսնցնէինք մեր հոգիներուն յատուկ այն նուրբ յատկութիւնը, որ զանոնք կը վերածէ անկարելի, անհաւատալի, զօրաւոր և ստեղծագործ ոյժերու: Հաւատալ Աստուծոյ հակառակ իր լռութեան, հաւատացեալէն կը պահանջէ հերոսական ճիգ և հաւատք, և այս երկուքը հաստատուն խարիսխը կը կազմեն զօրաւոր, հոգեկան նկարագրի տէր մարդուն:

Երեւակայեցէք, եթէ Աստուած պատասխանէր մեր բոլոր աղօթքներուն եւ խնդրանքներուն, այն ատեն մեր ուղեղներն ու միտքերը շնչահեղձ պիտի ըլլային, քանի որ այլեւս պիտի գիտնային թէ ինչ պիտի ակնկալեն կամ ինչ պիտի պատահի: Այդ պարագային, մեր հոգեկան ձեռներէցութիւնը վերջ պիտի գտնէր և այդպէսով մենք պիտի կորսնցուցած ըլլանք մեր կեանքի երկու մեծագոյն յատկութիւնները, մեր ՀԱԻՍՏՔՆ ու ԱԶԱՏՈՒԹԻՒՆը: Յետոյ, պատասխան մը՝ տրուած սովորական բառերով կրնայ չըլլալ մեր ակնկալած իրաւ պատասխանը: Բոլորիս ծանօթ է թէ որոշ զգացումներ կան զորս մարդկօրէն չենք կրնար կատարելապէս, հարկ եղածին նման արտայայտել, ինչպէս ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ՍԷՐ, ԳՆԱՀԱՏԱՆՔ և ՆՈՒԻՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ:

Սինա Լերան բարձունքէն լսուած ձայնը եկաւ հաստատելու թէ միայն ձայն մը մեզի՝ մարդոց համար բաւարար չէր. այդ ձայնը կրնար Օրէնքի Տախտակ մը տալ բայց շնորհ չէր բաշխեր, որովհետեւ Աստուածային շնորհքը մարդուն սրտին մէջ կը մտնէ ուրիշ ճամբով: Ձայնէն զատ ուրիշ և աւելի լաւ միջոցներ կան: Մարդկային ականջը՝ ամենակատարելագործուած, միակ և բացարձակ լսելու միջոցը չէ, ատոր համար ալ ըսուած է «Գեղեցկութիւնը կը փսփսայ լսող սրտին. սէրը չի պոռար, և մտքի յափշտակութիւնը կը մնայ լուռ»:

Անշուշտ Հայր Աստուած մարդկային սրտին կը խօսի ուրիշ միջոցներով եւս քան թէ երկինքէն եկող բառերու կոյտով միայն.

Ան մեզի տուած է խաղաղութիւն մը, որ ամբողջովին վեր է մարդկային մեր ըմբռնողութենէն և հասկացողութենէն.

Ան մեզի տուած է Նախախնամութիւնը՝ հոգալու մեր բոլոր կարիքները.

Ան մեզի տուած է ոյժը վերանորոգումի, որ կու գայ միայն անոնց՝ որոնք կը հաւատան և կը վստահին Աստուծոյ.

Ան մեզի կը ներշնչէ վստահութիւն մը, որ կու գայ անոնց միայն՝ որոնք գիտեն ըսել. «Տէրը իմ հովիւս է»:

Ստոյգ ըլլալու հիմքը խարսխուած պարտի ըլլալ մեր հաւատքին մէջ, միակ բանը՝ խօսող մեզի, բառեր կարելոր չեն: Նման այն գոյգերուն՝ որոնք կ'ապրին միասին ու կը սիրեն իրար, և յաճախ խօսիլը կը նկատեն անկարելոր. որովհետեւ երբեմն նայուածք մը, ժպիտ մը, ձեռքի հպում մը աւելի շատ բան կ'ըսեն քան որեւէ խօսք: Աստուծոյ խօսքը մեր սիրտերէն կը ներթափանցէ միայն այն ատեն՝ երբ մենք հաղորդակից ենք իր Սուրբ Հոգիին: Մեր Փրկիչն ու Տէրը՝ Քրիստոս ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ բաժակ մը սառը ջուր, սիրով տրուած, յաճախ աւելի կը գնահատուի», որովհետեւ այդ արարքը այնքան սէր կը բովանդակէ ու միաժամանակ կ'արտացոլացնէ՝ որ այդ բարերարութիւնը կեանքը կը հարստանայ ու այդ արարքը կը դառնայ միջոց մը որ Աստուծոյ Հոգին մտնէ այդ անձերուն մէջ ու այդպէսով խօսի անոնց:

Հոն ուր սէրը կը խօսի՝ Աստուած կը խօսի: Այս սուրբ յարկէն ներս, մեր գաղութներէն ներս և առհասարակ Քրիստոնեայ ընկերութենէն ներս՝ եթէ սէր գոյութիւն չունի, ուրեմն աւելորդ է գոյութիւնը մեր հոյակապ տաճարներուն և հաստատութիւններուն: Աստուծոյ Հոգին միշտ կը փորձէ խօսիլ, կապի մէջ մտնել մարդկութեան հետ, իւրաքանչիւր անհատի, սրտի և կացութեան հետ: Հայր Աստուած միշտ կը փորձէ դպչիլ մեր հոգիներուն և միտքերուն իր Միածին Որդւոյն՝ Քրիստոսի սիրոյն ընդմէջէն: Հետեւաբար Մեծ Պահոց այս շրջանին բանանք ականջները մեր հոգիներուն՝ լսելու համար երկնային կանչը, որ մեզ դարձեալ կը հրաւիրէ դառնալու որդիները իր Սիրոյն և Լոյսին:

Ն.Ա.Մ.

